

պատահեցինք քարից կտրած մի արձանագրութեան, որի հորիզոնական երկարութիւնն էր 21 արշին, իսկ ծայրերի ուղղանկիւնի զծերինը 2, 2 արշին: Այս տարածութեան վրայ 25 արշին քարը տաշուած, կոկուած և արձանագրութիւնով ծածկուած էր: Մինչև արձանագրութեան ստորին տողը 3 արշին էր բարձրութիւնը գետնից: Տողերի թիւն էր 5, իսկ զրութիւնը յայտնի բևեռագրութիւն է, թէպէտ անձրևի և արևի ազդեցութիւնից վերին աստիճանի աւերուած: Այս արձանագրութիւնը բլրի բնական, կարմիր և փխրուն քարերի վրայ փորագրուած լինելով՝ անձրևաջրերը մաշել էին, ուստի և զրութիւնը շատ էր եղծուել, այն աստիճան, որ առաջին հայեցքից մինչև իսկ դժուար էր ճանաչել, որ այդ տեղ արձանագրութիւն կայ: Տողերի սկզբներում, միջում և վերջում մի քանի տեղ կային անեղծ դրեր, որ կարելի եղաւ օրինակել: Ամբողջ արձանագրութեան ճշգրտապատկերի հանելը թողնելով յարմարագոյն ժամանակի՝ օրինակեցինք միայն անեղծ դրերը:

Արմաւրի այս նոր արձանագրութեան երևւան դալը մի ապացոյց է, որ բևեռագրութիւնը շատ զործածական է եղել հնումը Արարատեան երկրում, ուր դեռ ևս շատ այդպիսի արձանագրութիւններ կարող են գտնուել եթէ անձնուէր և յարատե հետազօտողներ թիւը շատանայ:

ՄԵՍՐՈՊ ԱՐԲԵՂԻՍԿՈՂՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ.



ՖՐԵՕԲԷԼԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ.

ՅԱՌԱՋԱՐԱՆ.

ՖՐԵՕԲԷԼԻ ՄԱՆԿԱՎՈՐԺԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ
ՆՊԱՏԱԿԸ.



Հարուստիւթիւն) *

իկին վան—Քալքարը զրա մասին պատուական տեղեկութիւններ է տալիս ճանաչելով մարդկային բնութիւնը և ընդունակութիւնները, Ֆրէօբէլը տուեց իր մանկավարժական եղանակին բոլորովին հասարակ, բնական, ներդաշնակ տեսք: Մա իր ուշադրութիւնը չէ դարձնում միայն մարդու ընդունակութեանց վրայ, այլ և ամբողջում է նրա հոգին ու մարմինը: Ֆրէօբէլը ոչ մի բան մոռացութեան չէ տուել, նա աշխատում է զարդացնել մարդու ֆիզիքական մտաւոր և բարոյական կողմերը: Ֆրէօբէլը զրել է իր կրթական եղանակը զուտ մարդագիտական հիմքի վրայ: Զարդացման իւրաքանչիւր շրջանից խղճի մտօք հարցնում է, թէ ինչ է հարկաւոր երեխային, որն է այն օրէնքը, որ որոշում է ընդունակութիւնների զարգացման կանոնաւոր ընթացքը:

Ֆրէօբէլը կարողացաւ ցոյց տալ ամենալաւ եղանակը, որ պահանջում է մարդել մկանները և զործարանները առանց արգելելու կամ նուազեցնելու սրտի երեւակայութեան և ճաշակի զարդացումը:

Մա աշխատում է իւրաքանչիւր մարդուն տէր դարձնել իր այն ընդունակութիւնների, որ բնութիւնը տուել է բնորան, նա կամենում է պահպանել ամեն մի մարդու ինքնությունութիւնը, տալով նրան միջոց զարդացնելու այն ձիւքքը, շնորհքը, որով նա ուրիշներից զանազանուում, որոշուում է: Զրկայ երկու մարդ, որոնք ունեն

*. Տես Նախընթաց համար:

նային միևնոյն ընդունակութիւնները միևնոյն ոյժերը: Մարդիկ աւելի ընդունակութիւն ունեն, քան թէ սովորաբար կարծում են բայց չեն երևում որովհետեւ նրանց ոյժերն, ընդունակութիւններն իր ժամանակին, հէնց սկզբում չեն զարգացրել:

Արմատացած նախապաշարմունքները կուրացնում են ծնողներին ի զուրկորցնել են տալիս երեխայի առաջին վեց տարիները, որոնք շատ թանկագին են: Հատ անգամ ոչնչացնում են երեխայի ամենազեղեցիկ ձգտումների սերմերը և տաղանդը, կորցնել են տալիս երեխայի եռանդը, բնական զործունէութիւնը, որ ամենալաւ մանկավարժն էլ երբեմն չէ կարող վերադարձնել հետեւեալ 7 տարիներում:

ՍԿՋԲՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ:

Տիկին Մարէն Հօլցն ասում է. սովորաբար չեն աշխատում կրթել երեխային փոքր ժամանակ, այլ այդ կրթութիւնն սկսւում է, երբնա մըտնում է ուսումնարան, ուր գլխաւորապէս գիտութիւններ են սովորցնում. քան թէ կրթութիւն են տալիս:

Առաջին 6 տարիները մինչև ուսումնարան մտնելը չպէտք է երեխային դէպքի խնամքին թողնել, այլ պէտք է գիտենալ, որ հէնց կեանքի այդ առաջին շրջանից սկսած երեխան ըստանում է տպաւորութիւններ, որոնք դառնում են նրա զարգացման սկզբնակէտը: Ցանկալի է, որ մայրերը, դայեակները և բոլոր այն անձինք, որոնք խնամում են երեխային՝ ընդունակ լինին կատարելու այդ սուրբ ու կարեւոր պարտաւորութիւնը:

Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ մարդկութեան կէսը չըհասած 6—7 տարեկան հասակին՝ վախճանւում է: Այդ յառաջանում է խնամատարների տգիտութիւնից. մի թէ դրանք կարող են իրանց մեղաւոր չհամարել՝ երբ իրենց տգիտութեամբ այդ քան մահ են պատճառում:

Այն տպաւորութիւնները, որ երեխան ստանում է հէնց սկզբում իր ծնողներից՝ երբեք բոլորովին չեն անհետանում: Երեխան երբեք ծնողներից աննկատելի կերպով վատ օրինակ է

վերցնում, որ յետոյ կարող է նրա կորստեան պատճառ դառնալ: Ուրեմն որքան կարեւոր և անհրաժեշտ է մայրերի համար ճանաչել կրթութեան եղանակը և կարողանալ կրթութեան վերաբերեալ իրենց պարտաւորութեանն ուղղութիւն տալ:

Տխուր ճշմարտութիւն է, բայց այնուամենայնիւ պէտք է խոստովանուենք, որ չկար մի խելացի եղանակ, որ մարդու կրթութիւնը դրենէր բնական և օրինաւոր հիմքի վրայ, երբ Ֆրէօբէլն ուսումնասիրելով մարդու բնութիւնը և յատկապէս երեխայինը, ստեղծեց այն ցանկալի գիտութիւնը, որ իրաւամբ կարելի է անուանել *Ֆրէօբէլի ֆիլոսոֆիան*:

Այս գիտութիւնը Ֆրէօբէլը գործադրեց մանկական պարտիզում նրա ուսումնարանի անունն արդէն որոշում է թէ դա ինչ տեսակ ուսումնարան է: Պարտիզում, այսինքն բաց օդում, բնութեան ծոցում պէտք է կրթել երեխային, հոգալ նրա մասին՝ որպէս մի բոյսի մասին, որին կարելի է մարդկային բոյս անուանել և տալ նրան բնութեան բարօրութիւնը: Բայց ի նկատի ունենալով, որ եթէ սկզբում անհոգ լինինք, այդ բոյսը յետոյ պէտք է վնասուի և երբեք կանոնաւորապէս չի զարգանայ, պէտք է բոլոր ուշադրութեամբ հետեւենք Ֆրէօբէլին, երբ նա մեր առաջն է դնում այն դադափարը, որ ուղղութիւն է տալիս կրթութեանը, երբ պարզ կերպիւ բացատրում է իր նպատակը և միջոցներ է առաջարկում այդ նպատակին հասնելու համար:

Պէտտալօցցու և Ֆրէօբէլի կարծիքով սկզբնական կրթութիւնը շատ կարեւոր է: Այդ կրթութիւնը ուսումնարանում չի կարելի ըստանալ, եթէ առաջին տարիներում չաշխատենք կանոնաւոր կերպիւ զարգացնել երեխայի գործարանները, ոյժերը, խելքը, բարոյականութիւնը և աստուածապաշտութեան սկզբունքը:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԻԶԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՒ ՆՊԱՍՏՈՂ, ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ:

Ինչու Ֆրէօբէլն իր ուսումնարանն անուա-

նուժէ մանկական պարտեզ և ոչ ապաստանա-
րան կամ երեխաների ուսումնարան կամ խը-
նամատարութեան ուսումնարան:

Ֆրէօբէլէն իր մանկավարժական եղանակն չը-
հտարեց երեխաներին պահպանելու համար, որ
նրանք ջրի կամ կրակի մէջ չընկնեն, այլ ու-
սումնարանի համար նպատակ դրեց աստիճա-
նաբար զարգացնել երեխայի գործարանները,
անդամները, խելքը, բարոյականութիւնը:

Սկզբնական կրթութեան համար «ուսումնա-
րան» խօսքը նրան յարմար չէր թւում: Երե-
խայի վրայ չպէտք է նայել որպէս մի գաղափար
ամանի վրայ, որի մէջ պէտք է որքան կարելի է
շուտ լցնել մեր գիտութիւնը: Ամեն մի փոքր
երեխայ ունի իր «եսը» որ հաստատում է թէ
նա ունի մտաւոր անհատականութիւն և իր
սեպհական յատկութիւնները:

Ֆրէօբէլէն իր ուսումնարանը անուանեց Ման-
կական պարտեզ, որ չ'ըկարծեն՝ թէ դա մի հին
ձևի ապաստանարան կամ սովորական ձևի
ուսումնարան է, այլ զբաղով կամեցաւ ցոյց
տալ, որ դա մի նոր ձևի հիմնարկութիւն է՝
հիմնուած նոր գաղափարների վրայ:

«Ապաստանարան» և «ուսումնարան» խօս-
քերը պարունակում են երկու սխալ գաղափար,
այն է լոկ պահպանելը և երեխայի զուտը գի-
տութիւններով լցնելը՝ առանց նրան հարկա-
ւոր կրթութիւնը տալու: Ֆրէօբէլէն ամենից
առաջ ցանկանում է ունենալ պարտեզ, բաց օդ,
կանաչ խոտ, ծաղիկներ, ծառեր, մի խօսքով
լի բնութիւն, ուր կեանք կայ, ուր երեխաներ
կարող են զարգանալ ֆիզիքայէս և բարոյա-
պէս:

Ֆրէօբէլէն ցուցական եղանակի կողմնակից
էր. նրա կարծիքով որ բանի մասին էլ որ խօ-
սեն երեխայի հետ՝ պէտք է այդ բանը նրան
ցոյց տան, բայց այն էլ պէտք է գիտենալ, որ
կեանքը, բնութիւնը մի թանգարան չէ, որի
միջով կարելի լինի շուտ անցնել և ամէն մի
բան էլ շուտ տեսնել: Կեանքը մի արուեստա-
նոցի է նմանում ուր ամեն մարդ իր տեղն
ունի և միջոց՝ աշխատանքով զարգացնելու իր
ոյժերը և ընդունակութիւնները: Պէտք է դործ-

նական մարդիկ պատրաստել և ոչ այնպիսի
գաղաւորներ, որոնք կարողանան ամեն բանի
մասին խօսել, գաղափար կարգաւ և չկարո-
ղանան ոչ մի գործ կատարել: Որպէս զի երե-
խան սկսի զարգանալ, ամենից առաջ պէտք է
գիտենալ, որ նա սկսի ձեռագործներ հնարել:

Պէտք է գիտենալ, որ այդ ուսումնարանը
չեն անուանել մանկական պարտեզ, որպէս զի
ցոյց տան, թէ որքան պարտեզը կարեւոր է և
ինչ որ նա պարունակում է՝ անհրաժեշտ է երե-
խաների համար: Այդ անունն այն մտքով է
տուած, որ ցոյց տան թէ ինչպէս պէտք է նա-
յել երեխայի վրայ: Ֆրէօբէլէն կամենում է, որ
երեխայի վրայ նայեն որպէս մի բոյսի վրայ, որ
պէտք է խնամել, զարգացնել, ինչպէս որ նրա
պիտոյքը պահանջում է և ոչ թէ խնամել նը-
րան մեր քմահաճութիւններին համեմատ:
Ինչպէս որ բոյսը զարգանում է որոշ ժամանա-
կամիջոցում և որոշ հանդամանքներում, նոյն-
պէս էլ երեխան ունի զարգացման որոշ շրը-
ջաններ: Նա արտայայտում է իր անձնական
պիտոյքը, որին մենք պէտք է բաւականութիւն
տանք:

Պէտք է մի քանի նկատողութիւններ անել
Ֆրէօբէլի առաջարկած խաղերի մասին: Այդ
խաղերը բարոյապէս և ֆիզիքայէս ամրաց-
նում են երեխաներին, ցոյց են տալիս նրան, թէ
նա ինչպէս պէտք է դործադրէ և օգտուի իր
ընդունակութիւններից: Այդ խաղերն երե-
խային չեն դարձնում անխաղաղասէր, այլ սո-
վորցնում են քննողութեան, խորհեցողութեան,
մարդումեն նրա աչքը, ձեռքը, սովորցնում են ըզ-
գոյշ լինելուն արագաշարժութեանց, գործա-
վարութեանց ժամանակ և ապրելու եղանա-
կին:

ՊԱՐՏԻՉՊԱՆՈՒՆԻՔ.

Մանկական պարտիզի կառավարութիւնն ա-
ւելի լաւ է յանձնել վարժուհիներին, թէպէտ
և Պէտտալօցցին և Ֆրէօբէլէն ապացուցել են,
որ վարժապետը կարող է կառավարել մանկա-
կան պարտեզը:

... ԱՅՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՏԱՂԱՆԴԸ ՈՐ ՊԷՏՔ Է ՈՒՆԵՆԱՆ ՊԱՐՏԻԶՊԱՆՈՒՀԻՔ:

Պարտիզպանուհի դառնալու համար պէտք է ունենալ ձիրք: Այդ ձիրքն կայ այն մարդու մէջ, որ հրապուռութեամբ է մանկական աշխարհով, որ ցանկութիւնն և սէր ունի երեխաներով ըզրադուելու, խաղալ նրանց հետ, հասկանալ նրանց ձգտումները և դրանց ուղղութիւնն առաջ, որի սիրտը բաբախում է երեխաների սրտերի հետ և որը առանձին ընդունակութիւնն ունի զարգացնել նրանց ազնիւ զգացմունքները:

Է ՊԱՐՏԻԶՊԱՆՈՒՀԻՔ ՊԷՏՔ Է ԿՐԹՈՒԱՆՆԻՒՆԻՒՆ:

Տիկին Վան—Քաջբարձր, որի կարծիքները յարգանքի արժանի են, պարտիզպանուհուց հետեւալ է պահանջում:

Պարտիզպանուհուց պէտք է պահանջել, որ նա լինի պատկառելի, կրթութեամբ, գիտուն, ունենայ լաւ ձեւեր, արդար գաղափարներ, սիրող սիրտ, լաւ գիտենայ իր մայրենի լեզուն, կարողանայ անխալ գրել ու կարդալ, հետաքրքրութեամբ պատմել, գրութեան ձեւը լինի գեղեցիկ, կարողանայ Ֆրէօրէլի ձեւով նկարել, ձեռքը վարժուած լինի զանազան գործողութեանց համար, ծանաչէ զանազան առարկաների ձեւերը: Պէտք է այնքան մարմնամարդութիւն գիտենայ, ինչքան որ հարկաւոր է երեխաների մարդութիւնները զեկաւարելուն: Պէտք է բաւականին տեղեկութիւն ունենայ մարդկային մարմնի, նեարդերի և մկանների մասին, որքան որ հարկաւոր է առողջապահութիւնը հասկանալու համար, պէտք է լաւ ծանաչէ երկրաչափական արդուածները (Ֆիզուրա): Բաւական է գիտենալ թուարանութեան չորս գործողութիւնը և կոտորակները, պէտք է գիտենայ ամենահասարակ և հեշտ ձեւերը և պարզ կերպով կարողանայ բացատրութիւն տալ երեխային թուերի մասին: Նրա ձայնը պէտք է լինի զուարկան, ներդաշնակ: Նա պէտք է լաւ լսողութիւն ունենայ և կարողանայ ծիլի երգել: Պէտք է լաւ ուսումնասիրէ Ֆրէօրէլի մանկավարժական եղանակը,

որովհետեւ այդ եղանակը համապատասխանում է կրթութեան բոլոր պահանջներին: Երբ գիտեն այդ մանկավարժական եղանակը, կարելի է պարտիզպանուհի դառնալ, բայց բաւական է, ինչպէս շատերը կարծում են, որ պարտիզպանուհին կարողանայ կատարել որոշ փոքրիկ ձեռագործներ: Պէտք է հիմնաւոր կերպիւ ուսումնասիրել Ֆրէօրէլի ուսման ողին և գաղափարները, որ կարողութիւն լինի երեխային ուղղութիւն տալ նրա գործունէութեան մէջ: Պէտք է այդ բոլորը գիտենալ բայց և կարողանալ գործադրել:

Ահա դրանք են ամենակարեւոր պահանջները և որքան մի պարտիզպանուհի աւելի գիտութիւն ունենայ, այնքան աւելի լայն գաղափար կունենայ այդ գործի մասին և աւելի լաւ կարող կը լինի զարգացնել երեխային և ուղղութիւն տալ: Պէտք է շատ գիտութիւն ունենալ և լաւ գիտենալ Վերջապէս պէտք է կարողանալ այդ բոլորն իրագործել:

Ֆրէօրէլի կրթական եղանակը երեխային տրտում, ստիպում է կանոնաւոր գործունէութեան, արագութեամբ և հնարաղիտութեամբ գործ կատարելու:

Այն ինչ որ յիշեցինք՝ հիմնութեամբ մի կարեւոր յատկութեան վրայ, և առանց այդ յատկութեան՝ պարտիզպանուհու ոչ տաղանդը ոչ գիտութիւնը և ոչ էլ գործակատարութեան ընդունակութիւնը ոչ մի հետեւանք չեն ունենայ, այդ յատկութիւնն է լիովին և կատարեալ անձնուիրութիւնը:

ԵՐԵՒԱՅԻ ԱՅՆ ՊԵՏՈՅՔՆԵՐԸ ՈՐՈՇ ՊԷՏՔ Է ԲԱԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՏԱՂ ԵՒ ՈՐՈՇՔ ՄԵԶ ՄԱՏՆԱՅՈՅՑ ԵՆ ԼԻՆՈՒՄ ԹԷ ԻՆԶՊԷՍ ՊԷՏՔ Է ԿՐԹԵԼ:

Տիկին Վան—Քաջբարձր ասում է, ինչպէս բոյսին հարկաւոր է օդ, լոյս, աղատութիւն, որ կարողանայ տարածել իր ծիւղերը և բաւարար տարածութեամբ հող արմատների համար, նոյնպէս և երեխային է հարկաւոր օդ, լոյս, շարժողութիւններ իր մարմնին ամրացնելու համար: Կրթութեան մէջ զարգացումն

անուանում է երեխայի մարմնական, բարոյական և մտաւոր ոյժերի զարգացումն: Այդ զարգացումը կատարուում է խաղալով, շօշափելով, առարկաներ քննելով: Այդ կերպով է, որ երեխայի անգամներն ամրանում են, տպաւորութիւնները աւելի որոշ և հասկանալի են դառնում, նա սովորում է զիտել զանազանք և գործել:

Երեխային չ'պէտք է իր կամքին թողնել: Նա կարող է մարդ դառնալ յարաբերութիւններ ունենալով իր նմանների հետ:

Պէտք է ղեկավարել երեխայի ձգտումները դէպի շարժողութիւն և գործունէութիւն:

Ֆրէօրէյի կրթական եղանակը մեզ սովորեցնում է, թէ ինչ պէտք է անել, որ կարելի լինի օգնել և ուղղութիւն տալ երեխայի բնական պահանջներին: Ֆրէօրէյը մեզ ապացուցանում է, որ բնութիւնն երբէք չի գործում առանց նախագծի, նա մեզ ցոյց է տալիս իր օրէնքները և մեզ սովորցնում է նրանց հնազանդել: Մենք պէտք է հետեւենք բնութեան հրահանգին և երբէք չաշխատենք կատարել մեր քմահաճութիւնները: Ինկատի առնելով բնական օրէնքների հոսանքը մարդու մէջ, և ուսումնասիրելով նա զանազան փոփոխութիւնները, հեշտութեամբ նկատուում է, որ նա պիտոյքներ ունի: Երեխան սովորութիւն ունի յայտնել իր պիտոյքը, նա սիրում է սպառել իր ոյժերը, շարժողութիւններ անել և ամեն մի առարկայ շարժել իր տեղից: Որանով երեխան փորձում է անել այն ինչ, որ տեսել է իր շուրջը, այդ անուանում է խաղալ, այդ տեսակ խաղերով արտայայտուում է նրա երեւակայութիւնը և հնարաղիտութեան ոյժը: Նա ընտրում է մի որեւէ առարկայ, որ ըստ իր ցանկութեան ձեւափոխէ: Ֆրէօրէյը օգտւում է այդ բնական խաղերից և դրանց դարձնում է կրթական միջոց մատաղ հասակի համար:

ՄՏԱԽՈՐ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Առաջին տպաւորութիւններն անկասկած մեծ ազդեցութիւն ունեն երեխայի խելքի զարգացման վրայ: Փոքր երեխայի խելքը սկսում է

քննել և զիւտել անել, կազմում է իր համար ուղիղ կամ սխալ, պարզ կամ անորոշ կարծիքներ, այդ կերպով կազմակերպում է իր համար մի փոքրիկ աշխարհ: Նրա զաղափարները կախուած են այն առարկաների պարզութիւնից, բաղմամասնութիւնից, պայծառութիւնից կամ խառնակութիւնից, որոնք նրան շրջապատում են: Որպէս զի կարողանայ պարզ և որոշ զաղափար տալ առարկաների մասին՝ Ֆրէօրէյն ընտրում է այնպիսի խաղալիքներ, որոնք ունին որոշ և հասարակ ձեւեր ու պարզ գոյներ: Նա այդ տեսակ ընտրութիւնը կարեւոր է համարում, որովհետեւ բաղադրեալ խաղալիքները, բայց գոյները երեխան չի կարող ըմբռնել:

Սրէնքն այն է, որ ինչքան երեխան շատ խաղալիքներ ունի՝ այնքան աւելի պակաս է քննում, պակաս է խորհում ու մտածում դրանց մասին:

Շարժողութեան ցանկութիւնը, որ երեխաներն ունին՝ կարեւոր են համարում, որովհետեւ դրանով նրանք աշխատում են մարդիկ իրենց մկանները, որոնք սիրում են առարկաներ շօշափել և այդ կերպով աւելի զարգանում են:

Ֆրէօրէյը կամենում է, որ հէնց ծննդից ըսկըսած երեխայի վրայ նայենք որպէս մի խելացի և զգայուն էակի վրայ, որ աշխատում է յարաբերութիւն ունենալ արտաքին աշխարհի հետ, որպէս զի կարողանայ իր համար կազմել մի ներքին աշխարհ: Փոքր երեխայի վրայ չ'պէտք է միայն նայել որպէս մի նիւթական էակի վրայ (կտոր միս), որովհետեւ երբ նա սկսում է տպաւորութիւններ ստանալ, նա փորձում է մտաւոր կեանք վարել և զաղափարներ կազմել: Ախորժելի կամ անախորժ տպաւորութիւններն ստանում է առարկաներից և այդ զգացմունքները նետարդերի և ուղեղի միջնորդութեամբ հաղորդուում են հոգուն:

Մենք պէտք է ղիմենք երեխայի զգայականութեանը, որ կարողանանք զարթեցնել նրա մէջ ուղիղ և պարզ զաղափարներ, պէտք է դէպքեր, որոնք, որ կարողանանք տալ նրան պարզ և որոշ տպաւորութիւններ նրան շրջա-

պատող առարկաների մասին որոնց նա հետ-
տութեամբ կարողանայ զանազանել միմեանցից:
Ֆրէօբէլը մեծ մտախոհութեամբ երկար քն-
նադատութիւններէից և բազմազան փորձերից
յետոյ ընտրեց երկխաների համար որպէս խա-
ղալիկ գունտը: յետոյ զեղեցիկ բիւրեղների ձե-
ւերը: զոր օր: խորանարդը: հատուածակողմն
և այլն:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ:

Երեխան սկսում է մտածել: երբ նկատուում
է: որ նա գործադրելով զանազան միջոցներ՝
աշխատում է հասնել իր որոշ նպատակին և երբ
նորա գործերը ցոյց են ապրիս: որ նա բաւա-
կան է: հասել է իր նպատակին: Այդ ժա-
մանակ էլ նա սկսում է զարգանալ որպէս
բարոյականութեան և պատասխանատուու-
թեան ընդունակ էակ: Այդ ժամանակն է: որ
կրթողը պէտք է զգուշանայ տալ նրան սխալ
կամ միմեանց հակառակ դադափարներ: մա-
նաւանդ այն անձանց մասին: որոնք շրջապա-
տում են երեխային:

Դիւռ լեզուն բացուելուց շատ առաջ: նա լաւ
զիտէ որ ինքն իր ատէն է: նոյնպէս լաւ զիտէ որ
լալով կամ ճշարով ու կամակորութեամբ ում-
նից կարող է ստանալ իր ցանկացածը: Այդ
գիւտն անելուց յետոյ դժուար է լինում նը-
րան կարգի բերելը: Բայց երբ հէնց սկզբից նը-
րան ապացուցանում են: որ իմաստութեամբ
են վարուում նորա հետ հէնց նրա բարօրու-
թեան համար: առանց ուշադրութիւն դարձ-
նելու նրա ճշոյցի վրայ: նա յօժարութեամբ
հնազանդում է:

Կրթական գործում ամենամեծ դէրը խա-
ղում է սովորութիւնը: Առաջին տպաւորու-
թիւնները ամենախիստ կերպով են ներգործում:
Երեխային այսօր չպէտք է այնպիսի բանի սո-
վորեցնել: որից նրան վաղը պէտք է հրաժարել:
Կրթութեան գործում ընդունուած լաւ սո-
վորութիւններն ամենալաւ նեցուկն են: իսկ
վատ սովորութիւնները դառնում են ամենա-
վտանգաւոր արգելք: Երեխային չրպէտք է իր
կամքին թողնել: որովհետեւ նա շատ անգամ

լաւ վատից չի կարող զանազանիլ: նա կընտ-
րէ վայրկենական զուարճութիւնը: որ կարող
է վնասակար լինիլ նրա համար: Սա կըգտնուի
քմահաճոյ: կսկսի պահանջածի հակառակն
անել: Սա այլ ևս չի հաւատայ: չի ունենայ
շնորհակալութեան զգացմունք: անհնազանդ
կլինի: անվայել: կամակոր: անբաւական: նրա
բնաւորութիւնը կփչանայ: կապականուի: Սո-
վորեցնելով հնազանդութեան՝ կըսովորի կարգի:
նա կնկարի այն խնամքը: որ տանում են նրա հա-
մար ընդհանրապէս: ևս առաւել խաղերի ժա-
մանակ կընկատէ: որ ամեն բան ունի իր ժամա-
նակը: չափը և որոշ եղանակը:

Պէտք է ամենայն միջոց գործ դնել: որ երե-
խան ընդհանրապէս սիրէ կարգը: որ ամենա-
կարեւորն է բարոյական կարգի և կանոնաւոր
կենցաղավարութեան համար: Կանոնաւոր ուղ-
ղութեան վարժեցրած երեխաները սովորում են
սիրել այն ինչ որ փորձել և սիրել են նրանց զե-
կավարները: Այն ժամանակ երեխաների սէրն
ընդունում է երախտագիտութեան ձեւ: նրանք
լինում են ուշադիր և կարող են ցոյց տալ անձ-
նուիրութեան գեղեցիկ օրինակներ: Երեխա-
ներն իրենց երջանիկ կղզան: երբ կարողանան
փոքր ինչ զրկողութեանց ենթարկել իրենց և
փոքրիկ զոհաբերութիւններ անել իրենց զե-
կավարների համար: Այդպէս է սկսում երե-
խայի բարոյական կեանքը: երբ նա յարաբե-
րութիւն ունի ծնողների ուսուցիչների հետ:
եթէ զրանք իրենց գործը կարողանում են յա-
ջողութեամբ կատարել իրենց զաւակների: ա-
շակերանների վերաբերութեամբ:

ԿՐՕՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ:

Պէտք է երեխային ներշնչել հաւատ: սէր:
երախտագիտութեան զգացմունք: Կրօնական
դադափարները լրացնում են բարոյական կեան-
քը: Կրթութեան նպատակն է բարոյական և
կրօնական զգացմունքեր տալ երեխային: այդ
պատճառով էլ պէտք է զլխաւորապէս նրա
հոգին կրթել կրօնական տեսակետից: ներշնչել
նրան Աստուծոյ խօսքը:

Իսկապէս չարութիւնը և բարութիւնը բնութիւնից է տրուած երկխային, նոյնպէս և զեղեցիկութեան և ազնուութեան դադարներն իրան անյայտ չեն: Զարութիւնը պէտք է չալածել նրանից ամենայն հաստատամտութեամբ, պէտք է երևան հանել և արմատախիլ անել: Բարութիւնը պէտք է սիրով խնամել, խրախուսել, նաև վարձատրել: Բարին կերջանկացն է երեխային, նա պէտք է սիրէ և փնտռէ բարութիւնը, բարոյական դադարները:

ԲԺ. ԼԵՒՈՒՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Վերջ առաջին մասին:



ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՐՔԵՐՆ ԱՆԳՂԱՅՈՒՄ:



առած է. ամեն մի աշխարհ իւր բարքն ունի. և յիւրաքանչեւ աշխարհագրական և պատմական տարբեր պայմանները պատճառում են նաև ազգային տարբեր բնաւորութիւններ, որոնք արտայայտւում են ազգերի առօրեայ կեանքի պայմանների վերայ: Մանկավարժական գործն բոլոր երկրներում էլ միանման լաւ պայմանների մէջ չէ. բայց ամեն մի երկրում գրա վատ ու լաւ կողմերը իւր տեղական որոշ կնիքն են կրում իրենց վրայ:

Մեզ յայտնի է, թէ Անգլիայում ինչքան մեծ ուշադրութիւն են դարձնում ոչ միայն ֆիզիքական կրթութեան վրայ, այլ և բարոյական դաստիարակութեան վրայ, ինչքան ջանք են գործ դնում ապագայ տղամարդի կամքի հաստատութիւնն ու պարտականութեան զգացմունքը մանուկ հասակից կրթելու համար, Ի հարկէ, չէ կարելի յարգանքով չվերարբերուիլ դէպի Անգլիացի դաստիարակների այդ ջանքը. բայց ամեն բան ունի նաև իւր աստուծոյ, որ շատ անգամ շատ աննախանձելի է լինում: Պէտք

է նկատել, որ անգլիացիները իրենց մանուկների մէջ անվեհերութիւն, եռանդ և ուրիշ լաւ յատկութիւններ զարգացնելու համար այնպիսի միջոցներ են գործ դնում, որոնք արդէն վաղուց բարձրագոյն ուսուցող մանկավարժական միջոց, Անգլիական ուսումնարաններում գործ դրուող մարմնական պատիժները կարող են մեզ ապշեցնել, մանաւանդ որ այդ բանն այնտեղ բոլորովին թագուն չէ կատարուում: Այլ յայտնի կերպով անգլիացի մանկավարժները փայտը գործ են դնում այդ իրենց կատարեալ իրաւունքը համարելով, իսկ երբ չափն անց կացնելով հարկադրուած են լինում դատարանի հետ գործ ունենալ, այն ժամանակ մանկավարժական թերթերն ու հանդէսները նորան իրենց հովանաւորութեան տակ են առնում և բարձրաձայն բողոք բանում մեղադրական վճռի դէմ: Փաստ—ինչքան կուզէք:

1893 թուին Սօուհամպտոնի ուսումնարաններից մէկի մանկտուրը (աւագ աշակերտ) մի 14 տարեկան աշակերտի վեր է կացնում տեղից ու կանգնեցնում է դասատան մէջ տեղը կասկածելով, որ աշակերտը գրաւոր դասը իւր ընկերից է արտագրում: Աշակերտը մի այնպիսի ձևով է տեղից վեր կենում, որ ուսուցիչ (Tutos) Գրէյը հարցնում է նորան. «Տէնց գիտե՞նաս ուզում է նորան (մանկտորին) սպանել»: «Թէ կարողանայի կը սպանէի» պատասխանում է աշակերտը: Այս պատասխանի համար նրան հրամայում են ձեռքը մեկնել և հետեւաբար, խոնարհութեամբ ընդունել մի քանի հարուած միայն. բայց յամառ աշակերտը ընդդիմառում է և յուսահատ կռիւ սկսում իւր ուսուցչի հետ՝ դէնքի փոխարէն քարետախտակը գործածելով: Գրէյն էլ իւր աշակերտից յետ չէ մնում և անհնազանդ աշակերտը կապտած մարմնով վերադառնում է տուն: Անյայտնի է. որ աշակերտը իւր խիստ պատասխանը տուել է այն պատճառով, որ արդէն իւր ուսուցչի և նրա օրինակին հետեւող մանկտորի հալածանքները չափից անց են կացել: Գործը հանուում է դատաստանի և Գրէյը տուգանք վճարելու է դատապարտուում: Բայց տեղական «The scholmaster» լրագիրը, որ միևնոյն ժամանակ մանկավարժների բերանն է, բողոքում է այդ վճռի դէմ և հետեւեալ փաստաբանութիւնն է անում:

«Արդէն 30 տարուց աւելի է, որ Գրէյը ուսումնարանի կառավարիչն է, նա 270 աշակերտ ունի, որոնք շատ հեռու են հրեշտակ լինելուց, Անկարեւի ենթագրել, որ այդ բոլոր ժամանակաւորութեամբ փայտի (cane, իսկապէս ձեռնափայտ) օգնութեան դիմած չլինի: Թէ որ օրէնքով ուսումնարաններում մարմնական պատիժն արգելուած լինէր,